պա. եւ ահա արշալոյս է ու բանտապահը կուգայ վճռին հրամանը տանելու. ու կը պատմէ Թէշիշի անխռով վիճակը, հանդարտ ու մուշ քնանալը, և «Վալլահա ազիզ ատամ տըր» կ'ըսէ: «Գնա՛ ըսէ թող երթայ եւ Սուլթանին համար աղօթէ այդ կորիճ մարդը». այս կը լինի դատաւորին վերջին վճիռը(1):

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

Կ. Պոլիս

(1) Լեւենտ Թէշիշը ապրած է ԺԸ. դարու վերջին կիսուն:

ԹԱՔՈՒՆ ՍԵՐ

Կը բանամ լոյսին ծալքերը բոլոր
Սրտիս, այս գիշեր. կը բանամ լոյսին
Իղձերըս թաքուն, տրտում, մեղմօրօր,
Ու կ'ըմպեմ, կ'ըմպեմ սարսուռներ նըրբին...:

Ապրումներու գաղջ ծըւէններ, շողեր,
Անյայտ խորերէ եկէ՛ք արբենալ...
Աստղերու տակ լուռ, իմ սի՛րտս է ծաղկեր,
Եկէ՛ք լիանալ... ու մեկնիլ դարձեալ...:

Կ'ուզեմ քո՛յրն ըլլալ գգուող զեփիւռին,
Ու մեղմ ծաւալիլ օդին մէջ այնտեղ,
Ուր կը շնչես դուն, ուր կը փըրփըրին
Թեւերը քօղէ կարօտիդ զօրեղ...:

Կ'ուզեմ երազին դուռները բանալ,
Ու գըծել ուղին կեանքիդ դէմ ժպտող.
Կ'ուզեմ ես ըլլալ համբո՛յրը զուլալ
Լուռ բաղձանքներուն հոգիիդ շէնցող...:

Պոլիս, 1930

ԹՈՐՈՍ ԱԶԱՏԵԱՆ

Fonds A.R.A.M